ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» նոյեմբերի 2024թ. № 1120

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 197 որոշմանը կից ցուցակի 431-րդ տողում կադաստրային ծածկագիրը «06-006-0057-0043»-ի փոխարեն սխալմամբ գրվել է «057-044», 432-րդ տողում կադաստրային ծածկագիրը «06-006-0057-0044»-ի փոխարեն սխալմամբ գրվել է «057-045» և 433-րդ տողում կադաստրային ծածկագիրը «06-006-0057-0045»-ի փոխարեն սխալմամբ գրվել է «057-046», հիմք ընդունելով Ռուզաննա Վոլոդյայի Պետրոսյանի դիմումը և կադաստրային գործերի ուսումնասիրության արդյունքները՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Սպիտակ քաղաքի Ս.Ավետիսյան, Առափնյա, Պանրագործների, Թումանյան և Բանավան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 197 որոշմանը կից ցուցակի 431-րդ տողում գրված «057-044» թվերը փոխարինել «06-006-0057-0043» թվերով, 432-րդ տողում գրված «057-045» թվերը փոխարինել «06-006-0057-0044» թվերով և 433-րդ տողում գրված «057-046» թվերը փոխարինել «06-006-0057-0045» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ.նոյեմբերի 19
ք.Սպիտակ